

անցեալի սրտատուչոր անցքերը՝ ուշս դար-
ձուցած եմ 1893—1895ը դեռ շարունակ-
ուած գաղթականութեան վերայ, որ ներկայ
բարբարոսութիւնը գերազանցած գտնելով՝
մեծ հոսանք մի կալմեցին, որպէս զի բարե-
կարգ Առևտական երկրին մէջ անվրդով ապ-
րին: Սակայն, Ալեհափառ Հայրիկ, որչափ որ
այդ եղկելի ժողովուրդն կեանք պիտի վա-
րէր, հաց պէտք էր, իւր քաղցն յագեցնելու
համար: Բարեբաղդաբար, սոյն այս գաղ-
թականութիւնը որ, թէև արեան ծովէ ան-
ցած, սակայն հասած վայրն ունէր Հայրիկը,
որ պիտի մխիթարէր զինք, որպէս և մխի-
թարեց:

Ահա, այս յիշատակին համար ցան-
կանալով կը ցանկանայի փոքրիկ արձագանք
մի տալ, այն հազարաւոր գաղթականներու
մխիթարական ձայնը մշտաւեւ պահելու հա-
մար մշտախօս մի արձան կանգնել. սակայն
այդ մեծ գործ կը թողում մեծ մարգերու,
ես պարտաւորութիւն կը զգամ, զոր ինչ տե-
ւած և զգացած եմ, այսր զետեղել, որով կա-
րի բաղդաւոր կը համարիմ զիս, Բագրևանդ
անուն երկոյս նախագունն Հայոց Հայրիկի
մի մեծ բարեգործութիւնով զարդարել:

Առիթն եկաւ, ո՛վ Ղիտապետդ Հայաս-